ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2017, 70, № 2, 98-99

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ՅՈՒՐԻ ՎԱՉԱԳԱՆԻ ՍԱՅԱԴՅԱՆ
(1934 – 2017)

2017թ. հուլիսի 20-ին կյանքից հեռացավ ճանաչված գիտնական, նորագույն պատմական և ռեգիոնալ երկրաբանության մասնագետ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի առաջատար գիտաշխատող, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր Յուրի Վաչագանի Սայադյանը:

Յու.Սայադյանը ծնվել է 1934թ., Երևանում, ծառայողի ընտանիքում: 1959թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետը և ընդունվել աշխատանքի ՀՍՍՀ Երկրաբանական վարչությունում՝ որպես երկրաբան:

1967թ.-ից Յու.Սայադյանի գիտական գործունեությունը կապված է ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ: Այստեղ նա սովորել է ասպիրանտուրայում՝ նորագույն երկրաբանության բնագավառում ճանաչված գիտնական, ակադեմիկոս Կ.Կ.Մարկովի ղեկավարությամբ և հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Յու.Սայադյանի երկարամյա գիտական գործունեությունն առընչվում էր Հայաստանի և Կովկասի նորագույն երկրաբանության պատմության հարցերին՝ շերտագրությանը, լիթոլոգիային, ռելիեֆի ձևավորմանը, նեոտեկտոնիկային, գեոէկոլոգիային, հնակլիմայաբանությանը, հնաաշխարհագրությանը և շրջակա միջավայրի ձևավորման պատմության տարբեր խնդիրներին:

Իր աշխատություններում Յու.Սայադյանն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Հայաստանի տարածքի չորրորդական հասակի առաջացումների շերտագրության, լիթոլոգիայի, հնէաաշխարհագրության, գեոմորֆոլոգիայի և այլ հարցերին: Մեծ գիտական արժեք են ներկայացնում նրա կողմից կատարված համադրությունները հարևան տարածքների համահասակ գոյացումների հետ, ինչը հնա-

բավորություն ընձեռեց կազմել Հարավային Կովկասի չորրորդական հասակի շերտագրական համալիր սանդղակը:

Այդ ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվեցին և ներկայացվեցին դոկտորական ատենախոսության տեսքով, որը հաջողությամբ պաշտպանվեց Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի գիտական խորհրդում 2008թ.:

Յու.Սայադյանի հետազոտությունների արդյունքներն ամփոփված են ավելի քան 150 գիտական հոդվածներում և երեք մենագրություններում, որոնք հրատարակվել են միջազգային և հանրապետական գիտական մամուլում: Իսկ «Հայաստանի նորագույն երկրաբանության պատմություն» մենագրությունը (Երևան, 2009թ.) 2010թ.-ին հաղթող է ճանաչվել Միջազգային մրցանակաբաշխության բնական գիտությունների բնագավառի «Գիտական գիրք» անվանակարգում:

Յու.Սայադյանը գիտության բնագավառում իրեն դրսևորել է նաև որպես ակտիվ կազմակերպիչ: 1972-1978թթ. եղել է ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի նոր տեխնիկայի գիտական պրոբլեմների հանձնախմբի գիտական քարտուղարը, 1978-1988թթ. աշխատել է ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտքարտուղարի պաշտոնում: Նա եղել է մի շարք գիտական միջոցառումների՝ Չորրորդական ժամանակաշրջանի հետազոտությունների IV հայ-ռուսական համաժողովի (Երևան, 1973), Չորրորդական երկրաբանության Միջազգային Միության Հոլոցենի (INQUA) սիմպոզիումի (Երևան, 1982թ.), Միջազգային երկրաբանական կոնգրեսի նեոտեկտոնիկայի հարցերին նվիրված էքսկուրսիայի (IGC, Երևան, 1984) ակտիվ կազմակերպիչներից մեկը: Յու.Սայադյանը ընտրվել է Չորրորդական երկրաբանության ուսումնասիրության Հոլոցենի հանձնաժողովի Միջազգային Միության (INQUA) փոխնախագահ, ինչպես նաև՝ Չորրորդական ժամանակաշրջանի երկրաբանության ուսումնասիրության ԽՍՀՄ ԳԱ խորհրդի անդամ, ընտրվել է Նյու Յորքի ԳԱ անդամ: Նա սերտորեն համագործակցել է ինչպես հայրենական, այնպես էլ արտերկրի գիտնականների հետ:

Յու.Սայադյանը իր բազմամյա բեղմնավոր գործունեության համար 1978թ. արժանացել է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի «Գովեստագրի», իսկ Միջազգային երկրաբանական կոնգրեսի նախապատրաստման և անցկացման աշխատանքներում ակտիվ մասնակցության համար պարգևատրվել է Պատվավոր դիպլոմով և Արծաթյա կրծքանշանով:

Յու.Սայադյանի՝ վաստակաշատ գիտնականի, լավ գործընկերոջ, ազնիվ, բարեկիրթ և ընտանիքին նվիրված անձնավորության հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների հիշողություններում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ "Գիտություններ Երկրի մասին" տեղեկագրի խմբագրություն